

*Երկրաբանություն*

УДК 553.048

Հ. Հ. ՄԿՐՏՉՅԱՆ, Ա. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

**ՀԱՆՔԱՎԱՆԻ ՄՈԼԻԲԴԵՆԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՆՄՈՒՇԱՀԱՆՍԱՆ  
ՏՎՅԱԼՆԵՐԻ ՈՐԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ**

Հանքավանը (Կոտայքի մարզ) բնութագրվում է լեռնաշղթաներով. հյուսիսում՝ Փամբակի, հարավում՝ Ծաղկունյաց: Հանքավանի հանքավայրի ուսումնասիրությունը ունի ավելի քան մեկ դարի պատմություն: Անցյալ դարի 30-ական թվականների սկզբից մինչև 50-ական թվականների վերջը հանքավայրը ուսումնասիրվել է խորհրդային և հանքապետական մասնագետների կողմից: 1951–1961 թվականներին իրականացվել են պլանաշափ երկրաբանահետախուզական աշխատանքներ, որոնց արդյունքում տրվել է հանքավայրի առաջին տեխնիկատեսական գնահատականը: Հանքավայրի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են մինչքեմքրիի և քեմքրիի ապարները, որոնք պատռվում են պալեոզոյան լեյկոլիրատային պլազմոգրանիտներով, ինչպես նաև ստորին կավճի գրանոլիրիտներով և քվարցային դիորիտներով: Հանքավայրի տարածքում զարգացած են նոնաքարեալիդու-մազմնետիտային սկառները և սկառնացած ապարները, որոնք տեղադրված են ինտրուզիվաների և կրաքարերի հպոմային մասում: Կառուցվածքային առումով հանքավայրը տեղադրված է Հանքավանի, Մարմարիկի և Սարիկամի բեկվածքների հանգույցում [1]: Հանքների քվարցային դիորիտները ծգվում են 1,5–2,0 կմ մերձայնային տարածնան գծով 400–500 մ լայնությամբ: Ձևաբանորեն հանքամարմինը ներկայացված է բժավորված և պիսակավորված հանքայնացման անհավասարաշափ բաշխված շտոկվերկի ձևով: Հանքավայրը հետախուզված է լեռնահորատնան համակարգով՝ առուներով (20,3 հազ.մ<sup>3</sup>), հետախուզահորերով (4,5 հազ.մ), ստորերկրյա փորփածքներով (12,9 հազ.մ) և սյունակային հորատանցքերով (12,9 հազ.մ): Մոլիբդենի հանքայնացումը տեղադրված է հիդրոքերմալ փոփոխված քվարցային դիորիտներում, պղինձ-մոլիբդենային հանքայնացումը՝ սկառներում:

Հանքավայրը ուսումնասիրված է 50–210 մ փորփածքների ցանցով:

Նշենք, որ առանձին կտրվածքներում հորատանցքերը գտնվում են ոչ համակարգված, հորատման խորության ընտրության ընդհանուր սկզբունքը չի դիտարկվում: Ստորերկրյա փորփածքները անցկացվում են 4 հորիզոններով:

Բովանցքերի ընդհանուր ծավալի շուրջ 37%-ը անց է կացվել երկրևային եղանակով 2,7 մ<sup>2</sup> կտրվածքով, իսկ հետագայում պայթանցքերի մեխանիկական հորատումով:

Լեռնային փորվածքները նմուշարկել են ակոսային եղանակով՝ անընդհատ հորիզոնական ակոսներով: Ակոսների նյութը, որը վերցված է 1 մ երկարությամբ բովանցքերի հակադիր պատերից, միավորված է մեկ նմուշի մեջ: Ակոսների կտրվածքը  $0,1 \times 0,05$  մ<sup>2</sup> է: Հետախուզահորերի ակոսային նմուշի չափսերը նույնն են: Բովանցքի աճբողջ նմուշի քաշը կազմում է 24–26 կգ: Հանքային նմուշի երկարությունը համապատասխանում է երթի խորությանը, որը կազմում էր 0,5-ից (կարճացված երթի դեպքում) մինչև 2,5–3,0 մ: Հորատահանուկային այսն (եթե այդպիսին ձևավորվել է հորատմամբ) ըստ առանցքի կտրված կեար վերցվում է նմուշի համար, իսկ մյուս կեար պահպում է որպես կրկնօրինակ (դրվիկատ):

Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ հիմնական ակոսային և հսկիչ քերիչ նմուշների հարաբերական սխալները չեն գերազանցում 6–8%-ը:

Մոլիբդենի համար 2098 նմուշների և պղնձի համար 32 նմուշների ներլարուատոր ստուգումները ցույց են տվել, որ անալիզների պատահական շեղումները չեն գերազանցում քոյլատրելի սահմանները: Մոլիբդենի համար ստուգիչ լաբորատոր անալիզը 3–4% հարաբերական սխալի դեպքում ի հայտ չի բերել սխստեմատիկ շեղումներ, ինչը թույլ է տալիս հիմնական արդյունքները համարել հուսալի:

Ավելի վաղ իրականացված երկրաբանահետախուզական աշխատանքների ընթացքում հանքայնացված շտոլվերկի սահմաններում հորատված են 42 հորատանցքեր, որոնցից 32-ն են մասնակցել պաշարների հաշվարկնանը, դրանցից էլ 20-ը հատել են հաշվեկշռային պաշարները: Կենտրոնական հատվածներով և նրա թևերով անցկացվել են 87 հորատանցքեր, որոնցից 45-ը՝ որոնողական: Ինվինումետրիայի տվյալներով գենիքային և ազիմուտային շեղումները մեծ չեն: Հետախուզության ընթացքում հորատահանուկի միջն ելքը կազմել է 68,3%, իսկ ըստ որոշ հորատանցքերի և հատվածների՝ զգալիորեն ցածր (18%-ից քիչ): Հանքային գոտով հորատահանուկի ելքը կազմել է 73,3%: Երբային հորատահանուկի գործող հրահանգներով լիմիտավորվող ելքը ցածր չէ 70%-ից, գործնականում հորատման ցուցանիշները հնարավորություն չեն տալիս ընդունել նշված տոկոսային ելքի ժամանակ հորատահանուկային նյութում օգտակար բաղադրիչների պահպանվածությունը:

Մեր կողմից կատարված հետազոտությունները ցույց են տալիս, որ հեշտ լվացվող և քայլայիվող օգտակար բաղադրիչները հանուկի 70–80% ելքի դեպքում չեն ապահովում հավաստի տվյալներ:

Հաստ Հ. Սկրտչյանի ուսումնասիրությունների՝ Հանքավանի, Ազարակի նույնատիպ պղինձ-մոլիբդենային հանքավայրերի հանուկի նույնիսկ 90%-ի դեպքում նկատվում է մոլիբդենի պարունակության սխստեմատիկ նվազում [2]:

Այստեղից կարելի է ենթադրել, որ հորատահանուկի ելքը նշված հանքայնացման տիպերում պետք է լինի 90%-ից ոչ պակաս:

Հանքավանի հանքաբարում կոնդիցիոն հորատահանուկի ստացումը բարդանում է ինչպես ապարների ֆիզիկամեխանիկական առանձնահատկությունների, այնպես էլ հորատման պրոցեսում ի հայտ եկող մի շարք այլ

զործոնների պատճառով, ինչպիսիք են հորատման սարքի թրթումը, հանուկի ինքնախափանումը և նրա հետագա մաշումը: Հայտնի է, որ հորտահանուկի կորուստները կրում են ընտրողական բնույթ: Կախված հանքաքարի բաղադրությունից ու կառուցվածքից՝ հորատահանուկի նույնիսկ 70% և ավել լիմիտավորված մակարդակով երի դեպքում ընտրողական մաշումը կարող է զգալի լինել և ընդհակառակը՝ ներփակման հանքայնացման դեպքում 50–60% ելքի դեպքում օգտակար բաղադրիչի կորուստները կարող են զգալի չլինել: Դրանից հետևում է, որ հորատման որակը արժե գնահատել ոչ միայն հորատահանուկի ելքի մակարդակով, այլ նաև հորատահանուկային նյութում օգտակար բաղադրիչի պահպանվածությամբ:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հանքավայրերի լեռնահորատման համակարգով հետախուզման դեպքում հիմնականում տեղի են ունենում օգտակար կոնվունտների աղքատացում հորատահանուկի մեջ և հարստացում՝ ակոսային նմուշներում:

Սուածին դեպքում տեղի է ունենում հեշտ լվացվող և քայլայվող օգտակար բաղադրիչների հեռացում հորատման հեղուկի միջոցով, իսկ երկրորդ դեպքում նմուշի նյութի մեջ են ընկնում ապարներից հեշտ անջատվող օգտակար բաղադրիչները [3]: Երբեմն այդ երկու պրոցեսները փոխադարձ կոնպենսացնում են միմյանց, ինչը կարելի է ցույց տալ Հանքավանի օրինակով (տես աղյուսակը):

#### **Հանքավանի հանքավայրի պաշարների հաշվարկման սահմաներում ակոսային և հորատահանուկային նմուշահանման ցուցանիշների վերլուծությունը**

Կարգածքը	Նմուշների քանակը			Միջին պարունակությունը, %			Պարունակության գումարը		
	բովանցքերի	հորատանացքերի	ընդհանուր	բաստանցքերի	բաստանցքերի	ըաստանցքերի	բովանցքերի	հորատանացքերի	ըաստանցքերի
III–III	219	21	240	0,0495	0,0332	0,0481	10,880	0,694	11,574
IV–IV	–	397	397	–	0,0493	0,0493	–	19,590	19,590
V–V	483	624	1107	0,0547	0,0427	0,0534	30,211	28,949	59,160
VI–VI	–	559	559	–	0,0398	0,0398	–	22,269	22,269
VII–VII	650	655	1305	0,0373	0,0390	0,0382	2,261	25,553	49,824
VIII–VIII	346	109	455	0,0429	0,0525	0,0452	14,853	5,723	20,576
IX–IX	354	234	588	0,0465	0,0041	0,0443	16,461	9,597	26,058
X–X	490	286	776	0,0494	0,0418	0,0466	24,220	11,945	26,165
XI–XI	177	–	177	0,0373	–	0,0373	6,606	–	6,606
XII–XII	130	108	238	0,0518	0,0481	0,0501	6,735	5,194	11,929
XIII–XIII	129	–	129	0,0280	–	0,0280	3,636	–	3,636
XIV–XIV	65	–	65	0,0362	–	0,0362	2,356	–	2,356
Ընդհանուր	3043	2993	6036	0,046	0,0433	0,0447	140,219	129,514	269,733

Հանքավանի հանքավայրի նմուշարկման ցուցանիշները ցույց են տալիս, որ երես ընդունենք լեռնահորատման նմուշահանման միջինացված տվյալները որպես հիմք, ապա ակոսային նմուշների համար մոլիրդենի պարունակության հարաբերական տատանումը կկազմի

$$m_6 = \frac{0,0447 - 0,046}{0,0447} \cdot 100\% = +2,9\%,$$

իսկ հորատահանուկային նմուշների համար այդ ցուցանիշը կլինի.

$$m_K = \frac{0,0447 - 0,0433}{0,0447} \cdot 100\% = -3,1\%:$$

Ակսային (+) և հորատահանուկային (-) նմուշների համար մոլիբդենի պարունակության շեղումների հարաբերական միջին մեծությունները գործնականորեն միևնույն մակարդակի վրա են գտնվում և փոխադարձաբար մարդում են, ինչը բույլ է տալիս հետախուզական նմուշների տվյալները վստահ օգտագործել հանքավայրերի ալաշարների վերագնահատման նպատակով:

Այսպիսով, հետախուզման լեռնահորատման համակարգը կարելի է կիրառել պղինձ-մոլիբդենային հանքավայրերում միայն այն դեպքում, եթե հանքայնացումը ներկայացված է ներփակումային տիպով:

*ԵՊՀ օգտակար հանածոների հանքավայրերի  
որոշնանի և հետախուզման ամրթոն,  
«Գյորգի Գոդոյ Մայմինց» ՍՊԸ*

*Ստացվել է 19.11.2008*

#### ԳՐԱԿԱՆ ՌԵՎԻԵՎ

1. **Մօվսեսյան Ս.Ա.** Закономерности размещения рудных месторождений Армении. М. Недра. 1978.
2. **Սկրտչյան Հ.Հ.** Հանքավայրերի երկրաբանատեսական գնահատումը որոնման փուլում: Սերուական ծեռնարկ: ԵՊՀ, 2006.
3. **Մկրտչյան Գ.Ա., Մօվսեսյան Բ.Ս., Եզակյան Օ.Ս.** Ученые записки, ЕГУ, 2003, № 2, с. 126.

Г. А. МКРТЧЯН, А. А. АВЕТИСЯН

#### ОЦЕНКА КАЧЕСТВА ДАННЫХ ОПРОБОВАНИЯ РУД АНКАВАНСКОГО МЕСТОРОЖДЕНИЯ МОЛИБДЕНА

##### Резюме

В статье на примере Анкаванского месторождения молибдена рассматриваются представительность данных колонкового бурения скважин и горных выработок тяжелого типа.

Исследованиями установлено систематическое занижение содержания молибдена в керновых пробах и завышение его в бороздовых пробах. Это объясняется размыванием и выносом молибденита промывочной жидкостью в первом случае, а во втором – избирательным выкрашиванием молибденита в пробу при отбойке борозды. Разнозначные погрешности отбора проб по

величине примерно одинаковы и при применении горно-буровой системы разведки они взаимопогашаются. Полученные результаты исследований позволяют применить горно-буровую систему разведки на медно-молибденовых месторождениях с вкрапленным типом оруденения.

H. H. MKRTCHYAN, A. A. AVETISYAN

## ESTIMATION OF QUALITY APPROBATION OF ORE OF HANQAVAN MOLYBDENUM DEPOSITS

### Summary

In the article the imposing of present slit of column boring and heavy type mountain produces are considered on the example of Hanqavan molybdenum deposit.

By the exploration it is established that systematic lowering of content of molybdenum in the trials of core at its low percentage exit and raising it by furrowed trials. It is explained with eroding and bearing molybdenum, with the washing liquid, at the first case and at the second case with electoral painting of molybdenum in the trial, at the repelling of fissure. Different meaning inaccuracies of selection trial by size are approximately the same and by using the mountain boring system of prospecting they are mutual liquidated. The receipt results of the investigation allow to apply the mountain boring system of prospecting in the copper-molybdenum deposit with the sprinkle types instrument.